

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Էդիկ Մինասյան

ԽՆՈՒՍ ԳՎԿԱՌԻ ՅԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

Բանալի բառեր – Խնուս գավառ, ինքնապաշտպանական մարտեր, Յայոց Մեծ եղեռն, քրդեր, երիտթուրքեր, ինքնապաշտպանություն, թալան, կոտորած, Օսմանյան կայսրություն:

Յայ ժողովրդի ազատագրական պայքարով ու մաքառումներով հարուստ հազարամյակների պատմության մեջ 1915 թ. գրվեց ամենամռայլ էջը: Օսմանյան Թուրքիան հանձին երիտթուրք հանցավոր պարագլուխների՝ օգտվելով Առաջին աշխարհամարտում ստեղծված հարմար ռազմաքաղաքական իրադրությունից, իրականացրեց Նախօրոք ծրագրված ցեղասպան քաղաքականությունը՝ Յայոց Մեծ եղեռնը, որին զոհ գնացին ավելի քան 1,5 մլն արևմտահայեր: Յայ ժողովուրդը, նրա հասարակական-քաղաքական ուժերը, հատկապես ազգային երեք կուսակցությունները՝ դաշնակցությունը, հնչակյաններն ու արմենականները, հայոց եկեղեցական կառույցները հանկարծակիի գալով՝ ցավոք չկարողացան արժանի կերպով դիմագրավել այդ ամենաահավոր փորձությանը:

Արևմտահայության և նրա քաղաքական ու եկեղեցական կառույցների ճակատագրական վրիպումը արդյունք էր 1908 թ. Երիտթուրքական հեղաշրջման թյուրըմբռնման: Այն ջլատեց արևմտահայության մարտական ու քաղաքական ուժերը: Ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլև հոգևոր և ազգային-քաղաքական ղեկավարությունը հավատացին երիտթուրքերի կողմից առաջ քաշած ազատություն, արդարություն և հավասարություն կեղծ հեղափոխական լոզունգներին: Յեղաշրջման միջոցով և այս ապակողմնորոշիչ լոզունգներով իշխանության եկած երիտթուրք ռճրագործները կարողացան զինաթափել արևմտահայությանը ոչ միայն ռազմական առումով. ամբողջ ֆիդայությունը թողեց զենքը և անցավ խաղաղ աշխատանքի, այլև հոգեբանորեն: Դժբախտաբար, երբ Թուրքիան ներթաշվեց Առաջին աշխարհամարտի մեջ, համազգային թմբիրը դեռևս շատ ուժեղ էր: Ուստի պատահական չէ, որ Յայոց ցեղասպանության այնպիսի նախանշաններ ու նախապատրաստություններ, ինչպիսիք էին արևմտահայության տնտեսական լիակատար քայքայումն ու զորահավաքի

անվան տակ 20-45 տարեկան ամբողջ արական բնակչության հավաքումն ու ոչնչացումը չկարողացան հաղթահարել այդ մահացու թմբիրը¹:

Բացի այդ, բացասական դեր խաղացին նաև հասարակության տարբեր շերտերի միջև գոյություն ունեցող հակասություններն ու անմիաբանությունը: Ստեղծված այսպիսի իրադրության մասին Է խոսում դեպքերի ժամանակակից ու մասնակից, նշավոր ազգային, պետական ու քաղաքական գործիչ Կարո Սասունին՝ նշելով. «Հայ պաշտոնական շրջանները՝ Պոլիսեն մինչև հեռավոր գավառները, հնազանդություն, համբերություն և խոհեմության հորդոր կարդացին հայ ժողովրդի գլխուն, երբ ան զինվոր, շալակավոր և պարտադիր աշխատանքի բանվոր ու պարեն տալով կմախք կղառնար և իր դառնությունները կհայտներ: Եղեռնը փաստորեն կսկսեր զորահավաքի օրերեն, հայ ժողովուրդը ֆիզիկապես և բարոյապես կկոտորակվեր և սակայն կհամբերեր, կարծելով, թե դանակը դեռ ոսկորին հասած չէ: Վտանգված հայությունն այսպես կմտածեր, թե՛ կեդրոնի և թե՛ ծայրագավառներուն մեջ: Անշուշտ կային ըմբոստության կոչեր, կային անհնազանդ անհատներ, կային խմբակներ, որ առաջին օրեն դիմադրելու մտածումն ունեցան, սակայն ատոմք բոլորը չնչին փոքրամասնություն մը միայն կկազմեին և պատասխանատու անհատներ չէին: Վտանգը համահայկական էր, ու այդ վտանգին դեմ հայության հավաքականությունը, վերից վար, խոհեմության և զգուշության քաղաքականությունը կվարեր և թուրք պետության սահմաններուն մեջ հավատարիմ քաղաքացիի պարտականությունները կկատարեր ծայրահեղ զոհողություններով»²:

Սակայն 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության մի հատվածը, այնուամենայնիվ, ընդվզեց թուրք ցեղասպանների դեմ՝ նրանց հակադրելով իր դարավոր դիմադրական ոգին, ընտրելով գիտակցված մահը՝ ինքնապաշտպանական դյուցազնամարտ մղեց անարգ թշնամու դեմ՝ Տարոն աշխարհից, Մուշից, Խնուսից ու Սասունից մինչև Վան, Մուսա լեռից մինչև Ուրֆա, Տրապիզոն, Պոնտոս ու Շապին Գարահիսար: Դրանք հայոց դյուցազներգության նոր էջերն էին, գիտակցված ընտրություն պատվավոր մահվան և տարագրության ճանապարհներին ոչնչացման միջև:

Հաճախ հարց է ծագում, ինչպե՞ս եղավ, որ 1915 թ. հայկական որոշ շրջաններ ինքնապաշտպանության դրոշ պարզեցին և գիտակցված մահվան գնացին, իսկ այլ շրջաններ անձնատուր եղան թուրքական յաթաղանին: Ինչո՞ւ հնարավոր չեղավ համակարգել և փոխօգնության կապ հաստատել ինքնապաշտպանության դիմած տարբեր շրջանների միջև: Փաստորեն, 1915 թ. արևմտահայությունը չունեի ինքնապաշտպանության կամ ապստամբության ինքնուրույն ծրագիր: Կազմակերպական թերությունների պատճառը հենց ինքնապաշտպանության ինքնաբուխ բնույթն էր: Ակնհայտ է, որ հայերը ինքնապաշտպանության են դիմել մեծ մասամբ հապճեպ արձագանքելով իրադարձություններին և նրանց գործողությունները թելադրված են եղել իրադրության սրությամբ: Այս ցավալի իրողությունը միաժամանակ ապացուցում է հայերի հասցեին թուրքական պաշտոնական քարոզչությամբ տարածվող այն մեղադրանքի անհիմն լինելը, թե իբր հայերն «անհուսալի տարր էին՝ խռովարար, ապստամբ, թիկունքից հարված հասցնելու ընդունակ»: Եթե այդ մեղադրանքը

¹ Տե՛ս Ռաֆայել Թադևոսյան, Դրվագներ հայոց ռազմական պատմությունից, XIX-XX դարեր, Երևան 2012, էջ 160:

² Տե՛ս Նույն տեղում, էջ 655, 698:

համապատասխաներ իրականությանը, ապա, նախ, հայերի ինքնապաշտպանությունը կունենար ոչ թե տեղական, այլ զանգվածային բնույթ, երկրորդ, շատ դեպքերում հաջող էլք կունենար և չէր ավարտվի քաջամարտիկների եղեռնական կոտորածով կամ հերոսական ինքնասպանությամբ, ինչով ավարտվեցին, օրինակ, Շապին Գարահիսարի և Ուրֆայի հերոսամարտերը: Եվ, երրորդ, եթե Օսմանյան կայսրության հայ բնակչությունը պատրաստ լիներ և մտադրություն ունենար «թիկունքից հարված հասցնելու», ապա զենքի և պարտիզանական պայքարի մարտավարության հիմունքներին տիրապետող տղամարդկանց պակաս, ցավոք, չէր զգացվի, և թուրքական կառավարությունն էլ այդքան հեշտությամբ չէր կարողանա եղած առաջնորդներին մի հրամանով հավաքել, աքսորել կամ կոտորել՝ չհանդիպելով ոչ մի դիմադրության: Հայերի ինքնապաշտպանության պատմությունը ցույց է տալիս, որ այնտեղ, որտեղ հայերը մնացել են առանց առաջնորդի, որտեղ չեն եղել պայքարի կոչող և պայքար կազմակերպող անհատներ (ցավոք, մեծ մասամբ այդպես է եղել), բնակչությունը կոտորվել է գրեթե առանց դիմադրության:

Ռազմական առումով, ցավոք, հերոսամարտերի մի զգալի մասն ավարտվեց պարտությամբ, որը սակայն երբեք չնսեմացրեց նրանց հերոսականությունն ու պատմական նշանակությունը: Այդ մասին իրադարձությունների մոտ կանգնած հայ նշանավոր պատմաբան Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) գրում է. «Սակայն եղան գյուղեր, գտնվեցին շրջաններ, որոնք լուռ գլուխ չծռեցին դահճի առաջ, որոնք բողոքեցին, ըմբոստացան և փարելով զենքին, դիմադրեցին տաճկական յաթաղանին: ճիշտ է, կռիվը անհավասար էր, ուժերը անհամապատասխան և շատերը զենք վերնողներից նույնպես ընկան, բայց քաջաբար ընկան հարվածելով թշնամուն, ընկան փրկելով ցեղի անունը, դրա հետ նաև նրա գոյությունը»¹:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին 1914 թ. հնուսի գավառը վարչականորեն մտնում էր Երզրումի նահանգի մեջ: Գավառի 33 հայկական գյուղերում (այլ տվյալներով 35-38) ընդհանուր առմամբ ապրում էր 26 հազար հայ: Առավել խոշոր գյուղերն էին Գարաչոբանը (3 հազար մարդ), Գարաթյոփրին (1,5 հազար մարդ), Խոզլին (1,9 հազար մարդ), Գովանդուկը (1,5 հազար մարդ), Հարամիկը (1,5 հազար մարդ), Չաուրման (Չևիրմե) (1,8 հազար մարդ), Գոպալը (1,4 հազար մարդ), Արոսը (1,2 հազար մարդ), Խալչաուշը (Խաչալույս) 1,1 հազար մարդ), Զադքիկ (1,1 հազար մարդ): Հայաբնակ էր նաև գավառակենտրոնը՝ Խնուս բերդաքաղաքը (3,1 հազար մարդ)²:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց անմիջապես հետո, ամբողջ արևմտահայության նման, նրա մի մասը կազմող Խնուսի գավառի հայության դրությունն սկսեց օրեցօր վատանալ: Չորակոչը, թալանն ու տարբեր տեսակի բռնությունները հայ ժողովրդի համար ստեղծել էին անտանելի և անհանդուրժող դրություն:

Համիդեական քրդական հեծելազորը կենտրոնացավ Խնուս բերդում, Գարաչոբան, Գովանդուկ, Հարամիկ և Չաուրմե հայկական գյուղականների մեջ, որոնք կառավարության կողմից պարտավորվեցին մոտակա հայ գյուղերի մասնակցությամբ պարենավորել թուրքերին: Բարեբախտաբար, կարճ ժամանակ անց սրանք փո-

¹ Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Երևան, 1917, էջ 9:

² Տե՛ս Խնուս գավառ (1914 թ. դրությամբ), քարտեզ, հեղինակ Գ. Մ. Բաղայան, իսմբ. Է. Մինասյան, Երևան, 2005:

խաղովեցին Կարին-Բասեն-Ալաշկերտ ռազմաճակատ: Բացի զորագնդին տված հարկերից, հայ բնակչությունը պարտավոր էր վճարել նաև «Թեքելիֆի Յարպիե»՝ պատերազմի պետական պարտադիր փոխառություն, որով հայ բնակչությունը տալիս էր իրենից պահանջված ամեն ինչ՝ եգից, կովից ու ոչխարից բացի ցորեն, գարի, խոտ անգամ, ձեթ ու ճրագ: Այս ամենի դիմաց հարկահավաք պաշտոնյան տրամադրում էր ստորագրելու հասարակ թուղթ, որը որևէ արժեք չէր ներկայացնում¹:

1914 թ. դեկտեմբերին կազմվում են բեռնակիր գնդեր, որոնց մեջ բռնությամբ ներառում են նաև հայ կանանց, որոնք շալակով բեռ էին կրում մինչև Կարին, Բասեն և Ալաշկերտ: Նրանցից շատերը զոհ գնացին ձմռան բքին ու ցրտին, ոմանք էլ սովածությանն ու համաճարակին²: Ինչպես վկայում է թուրքական բանակում զորակոչի ենթարկված, այդ բանակի զինվոր, տասնապետ Յարամիկ գյուղից Եղիշե Մելիքյանը «դեկտեմբեր-հունվար ամիսներին հայ զինվորներին թուրք հրամանատարները զինաթափ արեցին և ուղարկեցին «Դևե Բոյնի» խրամատների ճանապարհները նորոգելու աշխատանքներին, որտեղից նրան հաջողվում է փախչել և թաքնվել հայրենի իսուսում»³: Նա նկարագրում է իսուսի հայերի վիճակի օրըստօրե ծանրանալը հատկապես այն բանից հետո, երբ 1914 թ. աշնանը Չուխուրա Մուսա բեյը իր 20 հազարանոց հրոսակներով Բուլանուխի վրայով իսուս եկավ՝ Բասենի ճակատ գնալու համար: Սակայն նա իր ճանապարհի վրայի իսուսի հայկական գյուղերը սարսափի ու թալանի ենթարկեց և 700 հեծյալներով մեկ շաբաթ Յարամիկ գյուղում մնալով՝ նոր տանջանքներ ու տառապանքներ պատճառեց գյուղացիներին ու գյուղի ռեստրոները Արշակի (որը գյուղից բացակայում էր) եղբորը, Գարեգինին, սարսափելի զանակոծման ենթարկել տվեց⁴: Այդ օրերին տառապանքի ենթարկված իսուսի հայ բնակչության ծանր վիճակի մասին ահա թե ինչ է գրում իսուսի հոգևոր առաջնորդ Աբգար վարդապետ Յոթնեղբայրյանը Կ.Պոլսի Յայոց ազգային Պատրիարքարան ուղարկած, 1914 թ. հոկտեմբերի 10-ով թվագրված իր զեկույցում. «Կրակի գծին մերձավոր հայ ազգաբնակչությունը պետք ունի գերմարդկային համբերության այս անտանելի տառապանքին: Այսօր որոշված է 50 քյուրտ հեծելագորք դրկել վիճակիս Գոպալ գյուղը խուզարկելու համար..., կրճգամ թե առանց իրական փաստի, ի՞նչ ահ ու սարսափի պիտի մատնվին խեղճ գյուղացիները:

...Վերջապես կապրինք տազնապալի օրեր և շվարած ենք, թե ինչպես և ինչով միսիթարվենք անստուգության մեջ տվայտող հայ ժողովուրդը»⁵:

Իսուսի հայ բնակչության վիճակը առավել ծանրացավ այն բանից հետո, երբ 1917 թ. փետրվարին Մուսա բեյի համիդեականներին փոխարինեց Բաղդադի արաբական զորաբանակը, որը եկել էր իսուսի վրայով Դութաղ՝ ռազմաճակատ մեկնելու: Սկզբում նրանք լավ վերաբերմունք ունեին հայերի հանդեպ, սակայն պարտությունից հետո, երբ նահանջեցին՝ ձմռան ցրտերին լցվելով իսուսի հայկական գյուղերը, սկսեցին սոսկալի հալածանքներ կիրառել հայերի հանդեպ: Նույն կերպ Ալաշկերտի և Մանազկերտի քրդերը ռուսական բանակի առաջխաղացումից փախչելով՝ իսուս էին

¹ Տե՛ս Կարո Սասունի, Պատմութիւն Տարօսի աշխարհի, Անթիլիաս, 2013, էջ 734:

² Տե՛ս Եղիշե Մելիքեան, Յարք-Իսուս, Երևան, 1964, էջ 271:

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ Տե՛ս Նույն տեղում:

⁵ Տե՛ս Նույն տեղում, էջ 272, 273:

լցվում և կատարյալ պատուհաս դառնում հայկական գյուղերի համար¹: «Յայն իր սեփական տունեն դուրս կհանվեր և թուրք ու քուրդ գաղթականները կտեղավորվեին: Եկող գաղթականները կապրեին հայու հացով ու ջրով, - գրում է Ե. Մելիքյանը»²:

Թուրքական իշխանությունները ծրագրելով խնուսահայության ոչնչացումը գլխավոր դերում նախատեսել էին քրդերին՝ Յամիդեի գնդերին և քրդական հրոսակախմբերին: Յայտնի է, որ Խնուսի գավառը և Նրա հարակից շրջանները քրդական խոշոր ցեղերի բնակավայրերից էին: Ջարդերի ընթացքում քրդերին անմիջականորեն աջակցելու էին թուրքական ոստիկանությունն ու ժանդարմերին: Եղիշե Մելիքյանը իր «Խնուսի տեղահանությունը և դիմադրությունները» հոդվածում թվարկում է խնուսահայության ջարդերի ղեկավար ու մասնակից քուրդ աշիրեթներին³: Խնուսահայության ջարդի ղեկավարներից նա առանձնացնում է Գայմագամ Թահիր բեյին, Բիթլիսի Ալի աղային, Յաճի Իսաֆ Էֆենդուն, Նուրատին բեյին, Մուհատին բեյին, Մահմուտ աղայի տղային՝ Շաքրիին, Ֆրգա Գումանտան Յաճի Յամտի բեյին, Զեաթիա Միրզային, Խնատի Խատիին, Խոլիասարի Շեյխ Սայիդ Էֆենդուն, Խռըթա Շեյխ Մուրադի տղային՝ Նուրիին: Իսկ ջարդին մասնակցելու մեղսակից քուրդ ցեղապետերից առանձնացնում է Ջիբրանցի աշիրեթից՝ Ֆեյզի բեյի տղաներին ու թոռներին, Մելիմ բեյին, Ազմային, Սատի տղային ու Նրա գավակներին, բըլըքցիներից՝ ավագակապետ Շահո-Խալոյի տղաներին՝ Թաժույին, Յամգոյին, Օզմանի Ալիին ու Նատոյին: Չըռըքցի աշիրեթներից՝ Խուլիխան բեյին ու իր տղաներին՝ Ուսոյին ու Մոռոյին: Յասանացիներից՝ Գոպալի Ուսուֆ աղայի տղային՝ Ֆեզլիին և ուրիշների⁴:

Փաստորեն խնուսահայության կոտորածի ղեկավարներն ու մասնակիցները հիմնականում եղել են քուրդ ցեղապետերը իրենց ընտանիքներով: Ինչպես ամենուրեք, հայերի հնարավոր դիմադրությունը կանխելու նպատակով ջարդերից առաջ երիտթուրք իշխանությունների հրամանով 1915 թ. մարտի սկզբներին տեղի հայության առաջնորդներն ու Նրանց մեջ հեղինակություն վայելող առավել նշանավոր մարդիկ ձերբակալվեցին, որով գլխատվեց խնուսահայությունը: Խնուս բերդաքաղաքում և տարբեր գուղերում ձերբակալվեցին 150 նշանավոր հայեր, որոնց թվում՝ առաջնորդարանի քարտուղար Կարապետ Մալխասյանը, Արոս գյուղի վարժապետ, դաշնակցական, Էջմիածնի Գեորգյան ճեմարանի շրջանավարտ Տեր Ղևոնդը և Նրա որդին՝ Կնյազը, Յրաչյա Ղևոնդյանը՝ քրդերեն այբուբենի և քերականության հեղինակը, Խալո-Մելքոնի տղա Վահանը, Յովհաննես Շահմուրադյանը, Իվան Սիմոնյանը, բոլորն էլ դաշնակցական էին, Մկո-Յովոյի Սուբհասն ու Արշակը, Զրմոյան Արամը, Փալանջյան Գևորգը, Խազիսագյան Ավետիս աղան և Նրա մեծ տղան՝ Արսենը, Անթոյան Մուշեղ աղան, Ալեքսան Էֆենդին և Նրա տղան՝ Կնյազը, հարամիկցի Մուրադյան Տիգրանը, Յակոբի տղան՝ Տիգրանը, դաշնակցական հարամիկցի Մեերի Խուրշուդը, բերդեցիներ Միքայելյան Մեսրոպը, Մոկլոյան Միսակը, Ճուրթ Սարգիսը

¹ Վերապրած Եղիշե Մելիքյանի վկայությունը Կարինի գավառի Խնուս գավառակի գյուղերի հայության տեղահանության և կոտորածների մասին տե՛ս 1915 թ. Յայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, Երզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Երևան, 2012, էջ 114:

² Տե՛ս նույն տեղում, էջ 113:

³ Տե՛ս Կ. Սասունի, Պատմութիւն Տարօն աշխարհի, էջ 733:

⁴ Տե՛ս նույն տեղում:

և ուրիշներ: Նրանց մեծ մասը դաշնակցականներ էին¹: Չորս օր ինուսուսմ բանտարկվելուց հետո նրանք չէթեների և ժանդարմների հսկողությամբ շղթայակապ տարվում են իբրև Կարին՝ դատվելու: Իրականում խնուսահայության ղեկավարությանը տարել էին Դերջան-Երզնկա ճանապարհի վրա գտնվող Սանսար-Դարա կիրճը (Շողալարի ձոր) և ոչնչացրել²:

Հայտնի է, որ պատերազմի մեջ մտնելուց կարճ ժամանակ անց՝ 1914 թ. դեկտեմբեր-1915 թ. հունվար ամիսներին Թուրքիան կրեց իր առաջին խոշոր պարտությունը Սարիղամիշի ճակատամարտում: Վախենալով, որ ռազմաճակատի գծին մոտ գտնվող ինուսի գավառը կարող են գրավել հարձակվող ռուսական զորքերը և իրենց չի հաջողվի ոչնչացնել տեղի հայությանը, թուրքական իշխանություններն այստեղ զգալիորեն ավելի շուտ սկսեցին ցեղասպանության ծրագրի իրականացումը: Նույնպիսի շտապողականությամբ և օպերատիվությամբ նրանք գործում էին նաև մերձճակատային մյուս շրջաններում³: Թուրք և քուրդ ցեղասպանների կողմից ինուսի գավառի հայության ոչնչացումը իրականացվեց 1915 թ. մայիսի սկզբին, մի քանի օրերի ընթացքում: Սակայն բոլոր վայրերում չէ, որ թուրք-քրդական ոճրագործները իրենց սև գործը կարողացան կատարել հեշտությամբ ու անարգել: Մի շարք գյուղերում տեղի ունեցան ինքնապաշտպանական հերոսամարտեր, որոնց արդյունքում ջարդարարները կրեցին զգալի կորուստներ, իսկ բնակչության մի զգալի մասն էլ կարողացավ փրկվել: Հարկավոր է նշել, որ ինուսի գավառը համեմատաբար բավականին լավ էր նախապատրաստված ինքնապաշտպանությանը, քանի որ հայ ազգային, քաղաքական կուսակցությունները և մասնավորապես ՀԶԴ-ն տասնամյակներ շարունակ տևական աշխատանք էր կատարել այստեղ: Չպետք է մոռանալ, որ գավառը գտնվում էր Արևմտյան Հայաստանի 3 առավել հայաշատ՝ Վանի, Բաղեշի (Բիթլիս) և Կարինի (Էրզրում) նահանգների սահմանագլխին և Ռուսահայաստանից դեպի երկիր գեներալ, զինամթերքի և ֆիդայիների տեղափոխման կարևորագույն հանգրվաններից մեկն էր⁴: Սակայն այդ ամենով հանդերձ ըստ Եղիշե Մելիքյանի՝ լայնածավալ և հաջող ինքնապաշտպանություն, այնուամենայնիվ, չստացվեց⁵: Նա հետևյալ կերպ է դա բացատրում. «Ընդհանուր հոգեբանությունն այն էր, թե ռուսը շուտով պիտի գրավեր ինուսը: Այս հոգեբանության հետևանքով հայերը որևէ լուրջ պատրաստություն չտեսան ապստամբության կամ ինքնապաշտպանության համար: Մասնակի պատրաստություններ կային միայն քանի մը գլխավոր գյուղականներու մեջ...»⁶: Բացի այդ, ինչպես վկայում է Եղիշե Մելիքյանը, ինուսցի մի քանի ազդեցիկ քուրդ ցեղապետեր խնուսահայությանը հավաստիացրել էին, որ եթե իշխանությունները ձեռնարկեն հայերի կոտորած, ապա իրենք պարտավոր են պաշտպանել նրանց: Հայերը ևս պարտավորվեցին պաշտպանել քրդերին, երբ ռուսները գրավեն ինուսը: Սակայն ռուսական հրամանատարությունը դադարեցրեց իր զորքերի առաջխաղացումը, և իրադրությունը կտրուկ փոխվեց: Հայերին «պաշտպանող» քուրդ ցեղապետերը անշուշտ թուրք կառավարության հրահանգով, օգտվելով առիթից,

¹ Տե՛ս Կարո Սասունի, նշված աշխ., էջ 737:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Ռաֆայել Թաղևոսյան, նշված աշխ., էջ 160:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս Ե. Մելիքյան, Հարթ-Ինուս, էջ 273:

⁶ Տե՛ս նույն տեղում:

փոխեցին իրենց որոշումը, մոռացան իրենց խոտումը և սկսեցին համագործակցել իշխանությունների հետ՝ Նպատակ ունենալով մասնակցել տեղի հայ բնակչության կոտորածին և ունեցվածքի թալանին¹:

Գավառում ջարդերն սկսվեցին 1915 թ. մայիսի 1-ին: Զրդական համիդիե հեծելազնների և քրդական հրոսակախմբերի հարձակման առաջին թիրախները դարձան Գովանդուկ (Կովնդուկ), Սալվորի (Սարվուրի) և Խրըմխայա (Կրըմկայա) գյուղերը:

Գովանդուկի, Սալվորի և Խրըմխայա գյուղերի ինքնապաշտպանական մարտերը: 1915 թ. մայիսի 1-ին Գովանդուկ գյուղ ներխուժեցին քրդական հեծյալ ջոկատն ու շրջակա քրդական գյուղերի խուժանը: Գյուղը բաղկացած էր 120 տուն հայ բնակիչներից²: Զրդական համիդեական հեծյալները սկզբում իբրև հյուրեր իջևա-նեցին գյուղի հայկական տներում, ապա հանկարծակի բերելով բնակչությանը՝ սկսեցին ջարդն ու թալանը: Նույն պահին Նրանց միացավ մերձակայքում գտնվող քրդական խուժանը: Այս ամենը տեսնելով՝ հայ գյուղացիների զինված խումբը փորձառու հայրուկների՝ դաշնակցականներ Միերի Դավթի, Յամագասպ Մալխասյանի և հնչակյան Ալեքսանդրի գլխավորությամբ գյուղում դիրքեր բռնելով՝ օրհասական կռիվ մղեց թշնամու դեմ՝ ստիպելով նրան փախուստի դիմել: Թշնամու Նահանջից օգտվելով՝ զինյալ փոքր խմբի պաշտպանությամբ գյուղի անգն բնակչությունը կարողացավ փախչել հարևան Գարաչոբան գյուղավանդ, որը Խնուս բերդաքաղաքից հետո գավառի ամենախոշոր բնակավայրն էր, որտեղ Նստում էր Նահիեի՝ (գյուղախմբի կենտրոն) մյուրդիորը՝ նրա պաշտպանությունը հայցելու³:

Նահանջող թշնամին նկատելով, որ գյուղը դատարկվել է, վերադառնալով՝ վճռական հարձակում ձեռնարկեց և գրավեց գյուղի մի մասը: Սակայն հայ մարտիկների խումբը կռիվը շարունակեց մինչև ուշ երեկո՝ հնարավորություն տալով մթի պայմաններում բնակչության մի մասին իրենց հետ միասին բարձրանալու Գոգալ Պապա լեռը: Այստեղից էլ նրանց միացած բազում հայրենակիցների հետ որոշեցին անցնել ռազմաճակատի ռուսական գիծը⁴:

Նույնը կրկնվեց նաև Սալվորի փոքրիկ գյուղում, որը բաղկացած էր 30 տուն հայերից⁵: Յամտի բեյի քրդական համիդեական հեծելազունը քրդական խուժանի հետ հարձակվեց Սալվորի հայկական գյուղի վրա: Այստեղ ևս մի խումբ հայ ինքնապաշտպաններ հերոսաբար կռվելով՝ լուրջ դիմադրություն ցույց տվեցին թշնամուն՝ դիմագրավելով հակառակորդին այնքան ժամանակ, մինչև որ անգն բնակչությունը կարողացավ հեռանալ Գարաչոբան: Միայն դրանից հետո նրանք Նահանջեցին, իսկ գյուղը ենթարկվեց թալանի⁶:

Մայիսի 2-ին նույն բախտին արժանացավ Խրըմխայա գյուղը, որը բաղկացած էր 45 տուն հայ և 5 տուն քրդերից: Գյուղը ենթարկվեց վերոնշյալ Յամտի բեյի համիդեական հեծելազնի հարձակման: Անգն ժողովուրդը հանկարծակի գալով՝ փախուստի դիմեց, մինչև գյուղացիներից կազմված զինված խումբը կռվելով թշնամու դեմ ապահովեց Գարաչոբան տանող ճորանցքի ճանապարհի անվտանգությունը, որն էլ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, էջ 48:

³ Տե՛ս Կ. Սասունի, նշված աշխ., էջ 738:

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս Ե. Մելիքյան, նշված աշխ., էջ 87:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 739:

հնարավորություն տվեց փախչող ժողովրդին ապաստանել Գարաչոբանում: Գյուղում մնացողները ենթարկվեցին կոտորածի, իսկ գույքն ու ունեցվածքը թալանվեց: Չինված խումբը բարձրացավ Գոգալ Պապա լեռը՝ միանալով այնտեղ հավաքված խմբին¹:

Գարաչոբանի և Գոպալի ինքնապաշտպանական հերոսամարտերը: Առավել ծանր դիմադրական մարտեր տեղի ունեցան Գարաչոբանում, որը բազմամարդ և նյութական նախանձելի վիճակով գյուղական էր²: Երիտթուրքական իշխանությունները հաշվի առնելով այստեղ ապաստանած հայերի թիվը և հնարավոր ուժեղ դիմադրությունը՝ կենտրոնացնում են մեծ քանակությամբ ուժեր³: 1915 թ. մայիսի 2-ին Գարաչոբանի մյուզիքը այստեղ հրավիրեց Օսման չաուշի գլխավորած մի դասակ՝ ժանդարմներով ու հեռագրատան պաշտոնյաներով, ինչպես նաև քուրդ ցեղապետերի առաջնորդներ Մոռոյի և Սևտինի չեթեններին՝ իրականացնելով Գարաչոբանի հայության կոտորածի և թալանի ծրագիրը: Շրջակա հայ գյուղերի դեպքերը պատրվակ բռնելով՝ մյուզիքը իր մոտ հրավիրեց նաև Յագրոյի տղաներին՝ Իսրայելին, որը գյուղի մյուզիքն էր եղել, Գասպարին, Կիրակոսին ու Չաքարյան Եղիշեին և առաջարկեց պաշտպանել նրանց, ակնկալելով մեծաքանակ գումարի տիրանալ⁴:

Եղիշե Չաքարյանին հաջողվեց ճարպկորեն մյուզիքի մոտից դուրս գալ և փախչելով միանալ Տերտերոջ Սիմոնի ղեկավարությամբ զինված ու կռվի պատրաստ խմբին, որի մեջ էին նաև հայտնի կռվողներ Յամագասպը, Շապուհը, Բուղաղի Տիգրանը և ուրիշներ: Մյուզիքը առաջարկեց Իսրայելին խոսել ու համոզել հայերին զինաթափ լինել և հանձնվել իր պաշտպանությանը՝ ինչպես Իսրայելը իր ընտանիքի հետ: Դիմադրության փորձերի դեպքում սպառնում էր աղետալի հետևանքներով բնաջնջել հայ բնակչությանը՝ օրինակ բերելով այն գյուղերը, որտեղ փորձել են դիմադրել: Մի կողմից՝ նա համոզում էր հայերին զինաթափ լինելու, մյուս կողմից՝ զաղտնի հրահանգում էր քրդական համիդեական հեծելազնդին պաշարելու գյուղը⁵:

Մայիսի 2-ի կեսօրին քրդական հեծելազունն ու խուժանը հարձակվեցին Գարաչոբանի վրա: Առաջին գրոհը հայերը ետ մղեցին՝ թշնամուն պատճառելով ծանր կորուստներ: Կորցնելով 59 հոգի՝ թշնամին նահանջում է: Մյուզիքը և Օսման չաուշը տեսնելով քրդերի պարտությունը և գետնին փռված դիակները՝ խիստ զայրացան և տեղն ու տեղը սպանեցին Յագրո Իսրայելին ու նրա եղբայրներին, ինչպես նաև նրանց մոտ ապաստանած բոլոր անզեն հայերին, իսկ Մոռոյին և Սևտինին նորից հրահանգեցին կոտորել բոլոր հայերին⁶:

Թշնամու նոր հարձակումով կռիվը վերսկսվեց: Սակայն հայերին հաջողվեց հետ մղել նրա բոլոր գրոհները և ապահովել անզեն բնակչության անցումը Գոգալ Պապա լեռը: «Թշնամին, միշտ զիրենք հալածելով, կը հետեւի իրենց: Սակայն զինեալ խումբը, միշտ կռուելով, հերոսական ճիգերով կարգիլէ թշնամիին հասնելու անզեն ժողո-

¹ Տե՛ս Կ. Սասունի, Լշված աշխ., էջ 739:

² Տե՛ս Ե. Մելիքյան, Լշված աշխ., էջ 35:

³ Տե՛ս Ռուբեն Սահակյան, Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, էջ 290:

⁴ Տե՛ս Կ. Սասունի, Լշված աշխ., էջ 739:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս Կ. Սասունի, Լշված աշխ., էջ 740:

վուրդին, - գրում է Եղիշե Մելիքյանը»¹: Միայն Սիմոն Տեր-Յովհաննիսյանը իր 25 հոգիանոց խմբով սպանեց 25-ից ավելի քրդեր և թշնամուց խլեց 5 հրացան²: Նրա խմբից 18 հոգին բաժանվելով՝ անցան Գրզըլ-Բարա գյուղը, որտեղ շրջապատվեցին քրդերի կողմից: Այստեղ 3 օրվա ինքնապաշտպանական կռիվներով նրանց հաջողվեց 2 քրդերի սպանել և անվնաս հասնել Մանազկերտ, միանալ ռուսական բանակին³: Այսպիսով, թուրքական և քրդական երկրորդ զորից նույնպես հետ մղվեց: Սակայն գեներալ և զինամթերքի պակասը հարկադրեց խնուսահայությանը նահանջել: Չինյալ հայկական խումբը նահանջելիս Գոպալ գյուղի մոտ նոր համալրում ստացավ: Նրան միացավ գուպայցիների զինված խումբը Տեր-Ավետիսի տղաների՝ Սեդրակի, Միսակի և Կարապետի տղայի՝ Մովսեսի ղեկավարությամբ: Այստեղ էին նաև Գորգմազյան Նազար աղայի տղաները՝ Արամ և Տիգրանը: Խումբը Գոպալից Տոբախան-Քեշիշյան գյուղերի վրայով անցնելիս հանդիպեց Խալիլ բեյի հետնապահ ջոկատին, որի հետ կռվի ընթացքում սպանվեց Գովանդուկի ռես Միերի տղան՝ Դավիթը: Նա լինելով հին հեղափոխական՝ 101 տարվա դատավճռով բանտարկվել էր Կարինում և ազատ էր արձակվել 1908 թ. սահմանադրությամբ⁴:

Չինյալ խումբը Արածանի գետի ափին հասնելով և տեսնելով հորդառատ գետը՝ ծառերից լաստեր պատրաստեց և դրանց կառչած, ոմանք էլ լողալով անցան գետը, արկածներից զերծ մնալով: Փրկվածները դիմելով ռուսական զինվորական ղեկավարությանը՝ հանձնվեցին նրանց: Ինչպես մնացած ղեպքերում, այս անգամ ևս Գարաչոբանի հայության շարժական և անշարժ գույքը թալանվեց: Խնուսի շրջանի Գարաչոբան գյուղի վիճակային փոխանորդ Կարապետ քահանա Տեր-Յովհաննիսյանի տված տեղեկության համաձայն՝ 15 հոգիանոց խմբով նա ևս դիմել էր ինքնապաշտպանության: Դա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ իր աչքերով կարողացել է գյուղի մյուսիսին ուղարկված հեռագիրը, որտեղ ասված էր. «Տերութենն հրամայուած է, որ հայերու բոլոր ինչքը և կին ու աղջիկները իսլամին կը պատկանին: Կոտորոցէ՛ք հայերը և ռուս բանակի առջևէն մի փախչի՛ք, այլապես դուք ևս հայերու պես պիտի կոտորուիք»⁵: Հեռագիրը կարդալուց անմիջապես հետո նա կանչել էր բոլոր գյուղացիներին, այդ թվում մյուս գյուղերից այստեղ ապաստանած մարդկանց և դրուբոյունը պարզելով՝ հորդորել դիմել ինքնապաշտպանության, մինչև որ հնարավորություն ստեղծվի Մանազկերտ փախչելու, ռուսական զորքին միանալու: Կարապետ քահանա Տեր-Յովհաննիսյանը նկարագրում է, թե ինչպես ինքնապաշտպանության դիմելով՝ 15 հոգու գլուխն անցած, զինված, պատռելով քրդերի շղթան գյուղից դուրս էր եկել Դերըկ գյուղի մոտ ու միացել իր եղբոր Սիմոն Տեր-Յովհաննիսյանի խմբին, ապա ռուսական բանակի կազմում մասնակցել ռուս-թուրքական պատերազմին: Միայն Դերըկի մոտ նրանք 500-ի չափ քրդեր էին կոտորել, ապա ռուսների հետ միասին մտել Մանազկերտ: 1915 թ. հուլիսյան նահանջի ժամանակ նրանք ապաստանել էին

¹ Տե՛ս Ե. Մելիքյան, Հարթ-խնուս, էջ 276:

² Տե՛ ՀԱԱ (Հայաստանի ազգային արխիվ), Ֆ 227, ց 1, գ 425, թ. 19-24:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Ե. Մելիքյան, Լշված աշխ., էջ 276, 277:

⁵ Վերապրած Կարապետ քահանա Տեր-Յովհաննիսյանի վկայությունը Կարինի գավառի Խնուս գավառակի Գարաչոբան գյուղի հայության տեղահանության և կոտորածների մասին տե՛ս «1915 թ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ, Հայաստանի ազգային արխիվ, հ. 3, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք», Երևան, 2012, էջ 117:

Կարսի բերդում, ուր մնացել էին մինչև փետրվարի 18-ը, ապա միանալով խնուսցի-ների 6-րդ կամավորական գնդին՝ մասնակցել էին երզրումի գրավմանը՝ տալով 3 զոհ¹: Խնուսը վերստին գրավելու ժամանակ ողջ մնացած գարաչոբանցիները գյուղ վերադարձան իրենց ընտանիքները փնտրելու, սակայն չգտնելով՝ հիմք դրեցին 20-ի չափ կոր տների՝ ամուսնանալով գաղթական խնուսցիների հետ:

Գոպալ գյուղի ինքնապաշտպանությունը: Մայիսի 3-ին Խնուսի ծայրագավառի գյուղերից (65 տուն՝ 200-ի չափ հայ և 20 տուն քուրդ բնակչություն) Գոպալի (Կոբալ, Գոբալան) վրա հարձակվեց Ղզլպաշի Խալիլի ղեկավարած քրդական հեծելազորը: Գյուղացիների մի մասը փախչելով՝ ապաստանեց հասնանցի աշիրեթ Աճամ-օղլի Յուսուֆ աղայի տղաների՝ Պապայի և Ռաշիդ աղայի գյուղերը, որոնք խոստացել էին ապահովել հայերի անվտանգությունը: Վերապրածներ՝ Գոպալ գյուղի բնակիչներ Շարո Նազարյանի, Սիմոն Մխիթարյանի, Չարություն Սերովբյանի և Վահան Սարգսյանի վկայություններից պարզվում է, որ Գոպալ գյուղի հայ բնակչությունը ենթարկվել է քուրդ Խալըթ բեկի ձիավորների հարձակումներին և կոտորածներին, փախուստի դիմելով՝ ապաստանել է Տորախան գյուղում թուրք Բաբա Թոսունի պաշտպանության ներքո: Վերջինս պաշտպանում է հայերին, սակայն թուրքական կառավարությունը այս բանը իմանալով՝ ցանկանում է Բաբային պատժել: Վերջինս փախչում է գյուղից²: Բնակչության մի մասին կոտորելով՝ մյուս մասը միացավ հայերի զինված խմբին, որի օգնությամբ հասան ռազմաճակատի ռուսական զծին: Ըստ վերապրած Շարո Նազարյանի՝ «Գոպալ գյուղի և շրջանի մի քանի հայկական գյուղերի կանանց ու երեխաների մեծամասնությանը կոտորելուց ազատեց տորախանցի Շամիլի որդի Բարեն, ազգությամբ տաճիկ: Տաճիկ կառավարությունը այս լսելով՝ մահվան պատիժ նշանակեց, բայց Նա փախավ Տաճկաստանի խորքերը, իսկ մենք գնացինք դեպի ռուսները, որոնք արդեն գրավել էին մեր շրջանը»³:

Գոպալի գյուղացիների զինված խումբը Տեր Ավետիսի տղաների՝ Սեդրակի, Միսակի և Մովսեսի ղեկավարությամբ, կռվելով քրդական հեծելազորների դեմ և մեծ կորուստներ պատճառելով նրանց՝ ապահովեց անգնե բնակչության անվտանգ անցումը դեպի Գոպալ Պապա լեռը, ապա վերջում կռվելով միացավ Գարաչոբանի և Գովանդուկի խմբերին: Նրանք միասին անցնելով ռուսական զիծը՝ ծառայության անցան հայ կամավորական խմբերում⁴: Գոպալ գյուղից մեկ ուրիշ խումբ՝ Գորգմագյան Նազար աղան և նրա տղաներ Տիգրանն ու Արամը դիմադրելով թշնամուն՝ անցան ռուսական զիծն ու ազատվեցին քրդական հեծելազորի հետապնդումներից⁵:

Գարաբյետփրի (Կարաբետփրի) գյուղի ինքնապաշտպանական մարտերը: Մայիսի 4-ին 150 տներից բաղկացած Գարաբյետփրի գյուղի վրա հարձակվեցին հասնանցի աշիրեթապետերից Իկիթի Ուսուֆ աղան և Խալըթ բեյը իրենց հեծյալներով: Շուտով նրանց միացավ մոտակա քրդական գյուղերից եկած խուժանը: Անգնե ժողովրդի մի մասը փախչելով՝ ապաստանեց Գարաչոպանում, իսկ մյուս մասն էլ հանգրվանեց Խառմըջ գյուղի շեյխերին բարեկամ ընտանիքներում: Լաբբուդաղ

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 119:

² Տե՛ս նույն տեղում, էջ 120:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Ե. Մելիքյան, նշված աշխ., էջ 277:

⁵ Տե՛ս նույն տեղում:

գյուղի չէրքեզների բարեկամ ընտանիքներն էլ եկան նրանց մոտ¹: Իսկ հայերի զինյալ խումբը զարաբյուրեցիներ Շապուհի, Սիմո-Գբոյի և Բուդաղի Տիգրանի ղեկավարությամբ ջախջախիչ հակահարվածով ետ շարտեց թշնամուն՝ պատճառելով զգալի կորուստներ: Անպաշտպան բնակչության մի մասի հետ խումբը կռվելով կարողացավ բարձրանալ Գոգալ Պապա լեռը: Գարաբյուրեցի Դավիթ Մուրադյանը ևս կռվելով գյուղից դուրս եկավ, սակայն ընտանիքին փնտրելու համար գյուղ վերադառնալիս սպանվեց: Բուդաղի Տիգրանը բաժանվելով իր ընկերներից՝ վերադարձավ գյուղ, որը ավերակ ու ամայի գտնելով՝ անցավ խոզու գյուղ, որտեղ քրդերից մի քանիսին սպանելով՝ ընկերների հետ փորձեց անցնել Գոգալ Պապա լեռը², հերոսաբար կռվի բռնվեց, սակայն Բուռնազ գյուղում քրդերի կողմից նկատվելով և մինչև վերջ թշնամուն բազմաթիվ զոհեր պատճառելով՝ սպանվեց: Բարբարոս թշնամին կրակի տալով դիրքի վերածած նրա տունը, հրո ճարակ դարձրեց: Ռուսական բանակի առաջխաղացումով չէրքեզները գաղթեցին Խնուսից իրենց հետ տանելով իրենց մոտ ապաստանած հայերին: Փաստորեն Գարաբյուրիին մեկ օրվա մեջ իսկական ինքնապաշտպանական հերոսամարտ մղեց, սակայն բնակչության մի մասը կոտորվեց, գյուղը թալանվեց ու ամայացավ³, բայց մի մասն էլ փրկվեց:

Դուման (Տուման), Մարուֆ և Շաբաղին գյուղերի հայ բնակչության ջարդն ու դիմադրական կռիվները: Մայիսի 4-ին Դուման (բաղկացած էր 70 տներից, որից 60-ը հայեր էին, 10-ը՝ քրդեր), Մարուֆ (45 տուն հայ բնակչությամբ) և Շաբաղին (50 հայ տուն) գյուղերի վրա հարձակվեցին քրդական աշիրաթապետներից Դումանի Շահո-Խալոյի տղաների՝ Թաժտոյի, Զամգոյի և եղբոր Մոստկոյի ու Ալիի հեծելազորը և շրջանի քրդական խուժանը: Այս երեք գյուղերից միայն Դումանի մեջ Մուղդատ անունով մի հայ կտրիճ երիտասարդ իր տան մեջ դիրք բռնելով՝ հերոսաբար կռվեց թշնամու դեմ 10-ից 12 հոգու սպանեց: Թշնամին չկարողանալով գրավել անխոցելի համարվող դիրքը՝ տունը կրակի տվեց: Տան հետ միասին այրվեց հերոս քաջորդին: Ջարդերից ազատվողների մի մասը փախել էր Քաղքիկ գյուղ, իսկ մյուս մասն էլ Զարամիկ, որտեղ պատմել էին նշյալ գյուղերի ջարդի ու թալանի մասին:

Աղջամելիք (Խաչամելիք), Բուռնազ (Պուռնազ), Խըռթ (Խըրթ, Զերթ), Ենիգեղ (Ենիքոյ), Եղողու (Յել-Յելի), Գասպարի գեղ գյուղերի կոտորածը: Մայիսի 5-ին 30 հայկական տներից բաղկացած Աղջամելիք գյուղը պաշարվելով հասանանցի աշիրեթի քրդերի կողմից՝ ահավոր ջարդերի ենթարկվեց: Պաշարումը այնքան հանկարծակի եղավ, որ գրեթե ոչ ոքի չհաջողվեց ազատվել⁴: Զայերը սպանվեցին իրենց տների դռների առջև: Դիակների տակից ազատված վիրավոր հայ գյուղացիներից մեկը Զարամիկ գալով՝ նկարագրեց գազանացած քրդերի վայրագությունները, թե ինչպես սրերով, կացիններով, եղաններով ու գերանդիններով զինված խող-խողեցին անզեն հայ ծերերին ու երիտասարդներին, կանանց ու տղամարդկանց, մայրերին ու մանուկներին, թալանեցին ու ավերեցին ամբողջ գյուղը⁵:

¹ Տե՛ս Ե. Մելիքյան, նշված աշխ., էջ 277:

² Տե՛ս Նույն տեղում, էջ 278:

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ Տե՛ս Նույն տեղում:

⁵ Տե՛ս Նույն տեղում:

Մայիսի 5-ին Բուռնագի վրա, որը բաղկացած էր 5 հայկական տներից և հինգ քրդական, հարձակվեցին Գուևուզայի և Դատավերանի քրդերը մի կողմից, և մյուս կողմից՝ հասանանցի աշիրեթներից Աբուլ Մեջիտը, իր համիդեական զորքով, որը ռուսական բանակից պարտվելով՝ փախել էր ու եկել Խնուս: Նրա զորաբանակը տեղադրված էր Չեռնակ լեռան վրա, բռնել էր Չեռնակի կիրճը: Ջարդերից առաջ ևս նա ահ ու սարսափ էր տարածում Խնուսի և Բուլանուխի հայերի մեջ: Դեռևս ջարդերի նախօրյակին Աբուլ Մեջիդի ցուցումով Հարամիկից Շահվալտի Սամսոն Սշկան աղայի հանքում նրա քուրդ հեծյալները սպանեցին աղային և տիրեցին հանքին: Բուռնագի վրա հարձակման ժամանակ Աբուլ Մեջիտի հեծյալներն ու Գուևուզայի և Դատավերանի քրդերը լավագույն պատռոչի համար թալանի բաժանման ժամանակ իրար դեմ կռիվ սկսեցին, որից օգտվելով՝ գյուղի հայության մի մասը փախավ Գարաչոբան, իսկ մյուսները ապաստանեցին Խոզլու գյուղում¹:

Մայիսի 6-ին Խըռթ (բաղկացած 40 տներից, որի կեսը հայեր էին, մյուս կեսը՝ քրդեր), Ենիգեղ (50 տուն հայ բնակչություն), Եղրդլու (5 հայ տնից բաղկացած) գյուղերը ևս հարձակման ենթարկվեցին զինված քրդերի կողմից և անխնա կոտորվեցին²: Թալանեցին տնային գույքը, ամբողջ ունեցվածքը՝ անասունների հետ միասին: Ջարդերից մազապուրծ փրկված գյուղի հայերի մի մասը հասավ Խոզլու, իսկ մյուս մասն էլ գալով Հարամիկ՝ պատմեց իրենց գյուղերի ջարդի և թալանի մասին:

Խոզլու (Կոզլի) գյուղի ինքնապաշտպանությունը: Մայիսի 6-ին Խոզլուի՝ 120 տնից բաղկացած հայաբնակ մեծ գյուղի վրա հարձակվեցին Գոպալի Աջմու Ռուսոֆ աղայի տղաներ Ֆեզլին և Մոռոն՝ իրենց հեծելագործով, որոնց հետևից գյուղ մտավ մոտակա շրջաններից հավաքված քրդական խուժանը: Հայ գյուղացիների զինված խումբը դրմադրելով թշնամուն՝ ապահովեց անգն ժողովրդի փախուստի ճամփան: Ժողովուրդը մաս առ մաս փախչելով՝ ապաստանեց Սարդմեշի անտառում, իսկ մյուս մասն էլ Հաջի Գոբզի պարտեզի ծառերի մեջ³: Հայերի զինված խումբը դիմելով ինքնապաշտպանության՝ շարունակեց մարտերը մինչև երեկո: Երբ գիշերը վրա հասավ, մարտերը դադարեցին: Չինված խումբը մնաց իր դիրքերում, իսկ անգն ժողովուրդը փախավ զանազան ուղղություններով: Նույն օրը կեսօրին Խոզլուի փախստականների մի խումբ գալիս է Հարամիկ այն ժամանակ, երբ գյուղում իջևանել էր գայմազամիս և միամտորեն պատմեցին իրենց գյուղի ջարդերի և թալանի մասին, վերջինս անտեղյակ ձևանալով և սառնասրտորեն ունկնդրելով նրանց՝ հրամայեց. «Բերդ գացէ՛ք, իմ փոխանորդս հոն է, անիկա պետք եղած կարգադրութիւնը կընէ»⁵:

Խոզլուի ինքնապաշտպանական մարտերը օրերով շարունակվեցին: Խոզլուի ջրաղացում հարամիկցիների զինված խումբը ետ մղելով հակառակորդի գրոհները, նրան պատճառելով զգալի կորուստներ շարունակեց դիմադրել մինչև անգն ժողովուրդը ապաստան գտավ հարևան գյուղերում: Հաջի Գոբզի այգում զարաբեոփրեցի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 278, 279:

² Տե՛ս նույն տեղում, էջ 279:

³ Տե՛ս Կարո Սասունի, նշված աշխ., էջ 742:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 743:

⁵ Տե՛ս Ե. Մելիքյան, նշված աշխ., էջ 280:

Բուդաղի Տիգրանի և Նրա ընկերների զինված խումբը ևս մի քանի օր շարունակ կատաղի դիմադրություն էր ցույց տալիս թշնամուն:

Քաղքիկ գյուղի հայ բնակչության կոտորածն ու դիմադրության փորձերը:

Մայիսի 6-ին Քաղքիկ գյուղը, որ բաղկացած էր 110 տուն հայերից և ընդամենը 10 տուն բրդերից, ենթարկվեց շիբրանցի և բըլըքցի աշիրեթապետների՝ Սելիմ բեյի և Սատի աղայի ղուլամների, հեծելաշոկատների հարձակմանը: Գյուղը թալանվեց, իսկ հայ բնակչությունը կոտորվեց: Ջարդից ազատվողները փախչելով Չարամիկից՝ պատմեցին իրենց գյուղի վախճանի մասին: Դժբախտաբար Քաղքիկ գյուղը, որ մեծամասամբ հայաբնակ էր, անհրաժեշտ դիմադրություն ցույց չտվեց, հակառակ Նրան, որ հայտնի էր իր հին ու փորձառու հեղափոխական հայդուկներով, որոնցից էին Փուրթո Ղազարը, Սիմո-Օհանը, Շեյ Յակոն, Զեռի Գևոն, Իգիթի Միսակն ու Աբրոն¹:

Քաղքիկի նշանավոր մարդկանց մեծ մասին թուրք և բուրդ ոճրագործները ինուսի 150 նշանավոր մարդկանց հետ ոչնչացրել էին դեռևս ապրիլ ամսին: Քաղքիկցի գյուղացիները գրեթե բոլորն էլ տեղափոխվեցին իրենց բարեկամ կարծած տեղի ու հարևան քրդերի մոտ՝ հավատալով, որ վերջիններս իրենց կպաշտպանեն, սակայն անգթորեն սպանվեցին, իսկ նրանց ունեցվածքը յուրացվեց: Եղան շատ թույլ դիմադրության փորձեր, այն էլ մի խումբ երիտասարդների կողմից: Ըստ Քաղքիկ գյուղից վերապրածներ պապիս՝ Պողոս Մինասյանի և եղբոր Մկրտիչ Մինասյանի վկայությունների (որոնց ընտանիքները ամբողջովին կոտորվել էին այդ ջարդերի ժամանակ), քանի որ գյուղում գեները հավաքել էին մի քանի ամիս առաջ և գյուղացիները հավատով սպասում էին ռուսների գալուն, հատկապես լուրեր էին հասնում, որ թուրքական բանակը նահանջում է, իսկ ռուսները ազատագրել են Վանն ու Մա-նազկերտը, ուր որ է կմտնեն ինուս: Բացի այդ, ինչպես ամբողջ ինուսում, այստեղ ևս տեղի հայերի և հարևան քրդերի միջև համաձայնություն կար, ըստ որի նրանք կպաշտպանեն տեղի հայերին թուրքերի հարձակումներից, իսկ հայերն էլ նրանց՝ ռուսների հայտնվելու դեպքում, ուստի չէին նախապատրաստվել ինքնապաշտպանության: Ըստ նրանց, երբ քրդերը հարձակվեցին գյուղի վրա, մի խումբ երիտասարդներ դիմադրության փորձեր արեցին իրենց ձեռքն ընկած կացիներով, երկաթ գործիքներով, եղաններով և այլն: Սակայն ընկան թշնամու հրագետային կրակից: Նրանցից շատ քչերին հաջողվեց մի քանի բուրդ ելուզակներ սպանելով՝ փախչել ու ապաստանել խալչաուշ և Չարամիկ գյուղերում:

Չնայած արյունարբու բուրդ ցեղապետ Սելիմ բեյի ձեռքով, համիդյան բռնակալության օրերին, մինչև 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումն ու սահմանադրությունը, Աղջամելիք և Քաղքիկ գյուղերի միջև գտնվող Շահվերտի կամ Շահվերան կոչված ավերակների մեջ սպանվել էր քաղքիկցի նշանավոր անձանցից, ինուսում և Նրա շրջակայքում մեծ հեղինակություն վայելող Մինասի Մանուկ աղան (պապիս՝ Պողոս Մինասյանի հորեղբայրը,- ընդգծումը իմն է Ե. Մինասյան)², սակայն քաղքիկցիների մի քանի ընտանիք ջարդի օրերին միամտորեն գնաց խըզլահմատ՝ Սելիմ բեյի գյուղը, նրա կնոջից գթություն հայցելու: Սակայն վերջինիս հրամանով բոլորն էլ կոտորվեցին³:

¹ Տե՛ս Լույն տեղում, էջ 280:

² Տե՛ս Լույն տեղում, էջ 93:

³ Տե՛ս Կ. Սասունի, նշված աշխ., էջ 743:

Ջարդից միայն մի խումբ կանանց ու երեխաների հաջողվեց փախչել և ապաստանել Ջարամիկում:

Эдик Минасян, Героические самооборонительные бои армянских деревень Хнусской области в 1915 г. - В статье рассматриваются самооборонительные бои армянских деревень Гарачобан, Гаракепри, Гарамик, Чаурма, Гопал, Халчауш, Арос, Кахкик Хнусской области в 1915-ом году. Несмотря на то, что армяне не были готовы и также были обмануты курдами, большинство армян всевозможными средствами сопротивились зачинщикам геноцида и погибли. На основе фактического материала автор анализирует происшествия и приходит к заключению, что Хнус тоже участвовал в общеармянском сопротивлении.

E. Minasyan, The Heroic Fights for Defence in the Armenian Villages of Khnous Region in 1915 - The article discusses the combats for defence in the Armenian villages of Khnous region Garachoban, Garakopri, Haramik, Chaurma, Gopal, Khalchaush, Aros, Kaghkik in the years of Genocide. Being unprepared and deceived by Kurds nonetheless the majority of Armenians opposed genocide perpetrators with possible and impossible means and were martyred. Based on the factual material the author analyses the events and concludes that Khnous has also been a part of all-Armenian resistance.

Էդիկ Մինասյան - պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, պատմության ֆակուլտետի ղեկավար:

